ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

25 նոյեմբերի 2016 թվականի N 183-Ա

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի <<ա>> ենթակետով հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի հունվարի 29-ի N 24-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի ղեկավարի 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 275-16 գրությունը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական *Գեղամ Հայրապետյանին* 2016 թվականի դեկտեմբերի 1-ին՝ մեկ օրով, գործուղել գյուղ Քանաքեռավան՝ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության *մրցութային* հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի նոյեմբերի 25
ք. Հրազդան